600.0340.05.09.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

5 սեպտեմբերի 2018 թվականի №340Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի №43Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԳՐԻՆ ՓԱՌԻՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՁԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԳՐԻՆ ՓԱՌԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2018 թվականի հունիսի 20-ին և օգոստոսի 23-ին դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ ավարտել է «Չքնաղ» փոքր հիդրոէլեկտրակայանի (այսուհետ՝ Կայան) կառուցման աշխատանքները և խնդրել է Հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 22-ի №43Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Չքնաղ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0600 լիցենզիայում (այսուհետ՝ ԼԷ №0600 լիցենզիա) ամրագրել Կայանի փաստացի տեղակայված հզորությունն ու Կայանում տեղակայված ագրեգատների տվյալները,

բ) Ընկերության ներկայացրած կառուցված գլխամասային հանգույցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Ընկերությունը գլխամասային հանգույցը կառուցել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի տրամադրման հայտով չներկայացված հողամասերում, իսկ դրա վերաբերյալ չի տեղեկացրել Հանձնաժողովին,

գ) ԼԷ №0600 լիցենզիայի պայմանների 35-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների,

դ) Հանձնաժողովը 2018 թվականի հուլիսի 9-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ ԼԷ №0600 լիցենզիայի պայմանների 35-րդ կետի պահանջի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի հուլիսի 13-ի գրությամբ հայտնել է, որ խախտումը տեղի է ունեցել անուշադրության հետևանքով և ընկերությունը ձեռնարկելու է բոլոր միջոցները խախտումները հետագայում բացառելու նպատակով,

զ) Հանձնաժողովը 2018 թվականի հուլիսի 30-ի ՄՍ/2. 3-71/651-18 գրությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակում փոխօգնություն ստանալու նպատակով դիմել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն՝ խնդրելով հայտնել, թե արդյոք այդ հողամասերի վրա գլխամասային հանգույցի կառուցումը հանգեցրել է Ընկերության ջրօգտագործման թույլտվության պայմանների, մասնավորապես ջրառի կետի խախտման, ուստի այդ հիմքով վարչական վարույթի ժամկետը 30 օրով երկարաձգվել է,

է) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի օգոստոսի 21-ի №1/18.2/11743-18 գրության համաձայն՝ տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Ընկերությանը 2017 թվականի սեպտեմբերի 26-ին տրված №000225 ջրօգտագործման թույլտվության մեջ որպես պայման ամրագրված ջրառի կետի բարձրությունը համապատասխանում է փաստացի ջրառի բարձրության հետ, իսկ կոորդինատական կետերը գտնվում են միևնույն հարթության և բարձրության վրա,

ը) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է ԼԷ №0600 լիցենզիայի պայմանների 35-րդ կետը, քանի որ անմիջապես չի հայտնել գլխամասային հանգույցը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի տրամադրման հայտով ներկայացվածից տարբերվող այլ հողամասերում կառուցելու հանգամանքը, որը կարող էր հանգեցնել ԼԷ №0600 լիցենզիայի պայմանների, մասնավորապես պայմանների 7-րդ կետում նշված Կայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների խախտման,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 22-ի «ԳՐԻՆ ՓԱՌԻՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Չքնաղ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №43Ա՝

   1) որոշման մեջ «մինչև 2018 թվականի սեպտեմբերի 22-ը» բառերը փոխարինել «մինչև 2018 թվականի սեպտեմբերի 6-ը» բառերով.

   2) որոշման 2-րդ կետով հաստատված՝ ԼԷ №0600 լիցենզիայի պայմանների 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «9. «Չքնաղ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3500 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

      1) հիդրոտուրբին №1՝ CJA237-W-110/1*12, 434,8-1702,1 կՎտ, 2017թ.,
      2) գեներատոր №1՝ SFW 1250-1211470, 1250 կՎտ, 2017թ.,
      3) հիդրոտուրբին №2՝ CJA237-W-110/1*12, 434,8-1702,1 կՎտ, 2017թ.,
      4) գեներատոր №2՝ SFW 1250-1211470, 1250 կՎտ, 2017թ.,
      5) հիդրոտուրբին №3՝ CJA237-W-90/1*11, 351,6-1344,0 կՎտ, 2017թ.,
      6) գեներատոր №3՝ SFW 1000-101143, 1000 կՎտ, 2017թ.:»:

2. «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2017 թվականի հունվարի 27-ի №652-593 գրությամբ ներկայացված №ԱԲԵՆ17/06-01 բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած ութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Ընկերությանը նախազգուշացնել ԼԷ №0600 լիցենզիայի պայմանների 35-րդ կետի խախտման համար:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի սեպտեմբերի 6-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
5 սեպտեմբերի 2018թ.

Մ. Կոշեցյան

Ա. Վարդանյան

Ա. Բաղդասարյան

Ս. Շահինյան

Ժ. Խաչատրյան